

Երկաթուղային

Железнодорожник Армении

ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ, 2016



Շնորհավոր Մարտի 8, հարգելի կանայք

Հարգելի կանայք.

Սրտանց շնորհավորում են ձեզ այս գեղեցիկ գարնանային տոնի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ: Պատահական չէ, որ այն նշվում է գարնան սկզբին, երբ բնությունն առաջին շունչն է առնում երկար ձմեռից հետո, երբ մարդիկ ջերմություն, ուշադրություն և թարմություն են ակնկալում:



Այսօր դժվար է հիշել գործունեության գոնե մեկ բնագավառ, որտեղ չկան կին աշխատողներ: Երկաթուղին նույնպես բացառություն չէ. Հարավկովկասյան երկաթուղու աշխատողների մոտ 20 տոկոսը կանայք են: Նրանց նուրբ ձեռքերում են երկաթուղու բնականին գործունեության կարևորագույն նշանակություն ունեցող ծառայությունները, բաժինները և ստորաբաժանումները:

Չնայած շատերը կարծում են, որ կանայք երկաթուղում կարող են աշխատել միայն որպես ուղեկցորդուհիներ, գանձապահներ կամ հաշվապահներ. գեղեցիկ սեռը ներկայացված է ՀԿԵ-ի գործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Մաղթում են ձեզ երջանկություն, սեր, ընտանեկան բարեկեցություն և առողջություն: Թող իրականանան ձեր բոլոր երազարձերը:

Հարգանքներով՝ ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրեն
Ս. Գ. Վալկո

ՀԿԵ աշխատող կանանց շնորհավորեցին Մարտի 8-ի կապակցությամբ

Հարավկովկասյան երկաթուղում ձևավորված բարի ավանդույթի համաձայն՝ նախատնական վերջին աշխատանքային օրը բոլոր կին աշխատողներին հաճելի անակակալ էր սպասում: Բոլոր կանանց նվիրեցին առաջին գարնանային ծաղիկներ և սրտանց շնորհավորեցին Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:



«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում աշխատում է 551 կին: Ընկերության անձնակազմի 18%-ը կազմում են գեղեցիկ սեռի ներկայացուցիչները: 51 կին զբաղեցնում է ղեկավար պաշտոններ, 287 կին մասնագետներ են, 139-ը՝ ծառայող և 74-ը՝ բանվոր: Միայն 2015 թվականին բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվել է 124 կին:

Իսկ ՀԿԵ-ի 4 կին աշխատողներ արժանացել են երկաթուղային ոլորտի ամենաբարձր կոչմանը և հանդիսանում են Պատվավոր երկաթուղայիններ: Նրանք են՝ ՀԿԵ ՓԲԸ գլխավոր հաշվապահ, Հաշվապահական և հարկային հաշվառման ծառայության պետ Վեներա Ավետիսյանը, Գույքի բաժնի պետ Աննա Մոխովան, Աշխատանքի կազմակերպման, աշխատավարձի և կազմակերպչական-հաստիքային աշխատանքի բաժնի պետ Ռիմա Մխիթարյանը և երկաթուղու միակ կին կոնսկավար Զինաիդա Յովհաննիսյանը:



«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն մարտի 3-ին կայացած խորհրդակցության ժամանակ ամփոփեց փետրվար ամսվա աշխատանքի արդյունքները:

Ինչպես նշեց Ս. Վալկոն, փետրվարին նկատվել է բեռնափոխադրումների դրական դինամիկա, ինչը թույլ տվեց կատարել երկաթուղու հիմնական ցուցանիշները, օրինակ՝ բեռնաշրջանառություն, բեռների փոխադրում:

ՀԿԵ-ում ամփոփեցին աշխատանքի արդյունքները փետրվարին

ՀԿԵ-ի գլխավոր տնօրենն ընդգծեց, որ փետրվարին լրացուցիչ բեռնվել է 72,6 հազար տոննա բեռ, արտահանման փոխադրումները գերազանցեցին նախատեսվող ցուցանիշը 20,3%-ով: Իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածին համեմատ, արտահանման փոխադրումները ավելացել են 5 հազար տոննայով, տեղական բեռնափոխադրումները գերազանցեցին նախատեսվող ցուցանիշը 68 հազար տոննայով:

Օրական բեռնումը կազմեց 97 վագոն՝ նախատեսվող 60-ի փոխարեն, վագոնի պարապուրդը կր-

ծատվեց 51,5 ժամից մինչև 21,5 ժամ, իսկ տրանզիտային վագոնի պարապուրդը՝ 0,2 ժամով: Ընկերության ղեկավարի տվյալներով, լոկոմոտիվի օրական միջին վազը գերազանցեց անցած տարվա ցուցանիշը 5,1%-ով, իսկ արտադրողականությունը՝ 4%-ով: 2,6%-ով ավելացել է նաև տեղամասային արագությունը, որը փետրվարի արդյունքներով կազմեց 34,9 կմ/ժամ:

Գնացքների ժամանակացույցը փետրվարին կատարվեց 98,9%-ով՝ 1051 գնացքից ուշացել էին միայն 23-ը:

Ընկերության ղեկավարը հատուկ ընդգծեց անվտանգության հարցը, նշելով, որ 2016 թվականի փետրվարին գծի բալային գնահատականը բարելավվել է 7 կետով՝ կազմելով 86 միավոր:

Երկաթուղու հետագա հիմնական խնդիրների շարքում ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրենը նշեց բեռնափոխադրումների նոր ծավալների ներգրավվումը, բյուջեի եկամտային և ծախսային հոդվածների բալանսի ապահովումը, տեխնիկական միջոցների անվտանգությունը և կայուն աշխատանքը:

ՀԿԵ-ՈՒՄ քննարկվեց գծային աշխատանքների ընթացքը

Փետրվարի 26-ին կայացավ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության 2015 թվականի ամփոփումը և 2016 թվականին ամառային գծային աշխատանքների կատարմանը նվիրված տեխնիկական խորհրդի նիստ:

Բացելով նիստը՝ ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն նշեց, որ 2008-2015 թթ. Ընկերությունը ՀՀ երկաթուղային տրանսպորտի զարգացմանն ուղղել է 104,6 մլրդ դրամ, որից 74,2%-ը՝ ենթակառուցվածքի արդիականացմանը: Միայն անցած տարվա ընթացքում Հարավկովկասյան երկաթուղու ներդրումները կազմել են 6,5 մլրդ դրամ:

Երկաթուղային ենթակառուցվածքի վիճակը խիստ կարևոր է գնացք-

ների անվտանգ երթևեկության համար:

Ինչպես նշեց Ընկերության ղեկավարը, միայն 2015 թվականին տեղադրվել է 76 հազար փայտե և երկաթբետոնե կոճղակ, իսկ գծի գնահատականը բարելավվել է 7 կետով՝ մինչև 94 միավոր:

Մենք աշխատում ենք ոչ միայն գծային տնտեսության առողջացման, այլև էներգետիկայի և էներգամատակարարման, կենտրոնացման և կապի տնտեսությունների արդիականացմանն ուղղություններով: Անցած տարի վերականգնվել և շահագործման է հանձնվել «Փամբակ» ենթակայանը, որը չէր աշխատում 1989 թվականից, - ասաց Սերգեյ Վալկոն:

Իր հերթին ՀԿԵ ենթակառուցվածքի տնօրինության պետ Գենադի Սմիռնովը տեղեկացրեց, որ 2009-2015 թթ.



վերականգնվել է 438 կմ գիծ, իսկ 2015-ին տարբեր տեսակի վերանորոգման է ենթարկվել 137,4 կմ գիծ: 2008 թվականից, երբ ՀԿԵ-ն սկսեց իր հավատարմագրային կառավարչի գործունեությունը, տեղադրվել է 776 հազար կոճղակ, իրականացվել են գծի և կառուցների վերականգնման աշխատանքներ:

Սմիռնովի խոսքով, 2016 թվականին նախատեսվում է խստացնել կատարվող աշխատանքի որակական պահանջները, փոխել 35 հազար կոճղակ, վերանորոգել Հաղպատ-Ալավերդի-Սանահին հատվածը:

Ձեկուցելով 2015 թ-ին կատարված աշխատանքի մասին՝ Շարժակազմի տնօրինության պետ Նիկոլայ

Լավրենցովը տեղեկացրեց, որ տարվա ընթացքում վերանորոգվել է 91 միավոր վագոն, գծային տեխնիկա և հատուկ ու ինքնագնաց շարժակազմ: Ներկա պահին պատրաստվում են էլեկտրա- և ջերմաքարշեր, որոնք կշահագործվեն 2016 թ. գծային աշխատանքներում: Ուսուցման դասընթացներ է անցնում 11 լուկոմոտիվային բրիգադ:

Խորհրդակցության ընթացքում արձանագրվեց նաև տեխնիկական խափանումների կրճատում: 2015 թվականին արձանագրվել է 187 նման դեպք, իսկ ՀԿԵ-ի գործունեության առաջին տարվա ընթացքում գրանցվել էր 2769 խափանում:

Նիստի ընթացքում զեկույցներով հանդես եկան Փոխարտնիկի տնօրինության, Սանահինի մեքենայացված ուղեմասի, էներգամատակարարման, Ավտոմատիկայի և կապի, Վանաձորի, Գյումրու, Երևանի և Սևանի գծային-կայարանային միավորումների պետերը:



ՀԿԵ-ՈՒՄ ամփոփվեցին հունվարյան աշխատանքի արդյունքները

ՀԿԵ ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն փետրվարի 5-ին կայացած խորհրդակցությանը ամփոփեց Ընկերության աշխատանքի արդյունքները հունվարին:

Ինչպես նշեց Ս. Վալկոն, ներկա դրությամբ նկատվում է փոխադրումների նվազման միտում: 2016 թվականի հունվարին բեռնափոխադրումների նախատեսված ցուցանիշը կատարվել էր 91,2%-ով:

Միևնույն ժամանակ ՀԿԵ գլխավոր տնօրենն արձանագրեց Ընկերության աշխատանքի որակական ցուցանիշների բարելավում: Այդ ցուցանիշների շարքում նա մասնավորապես նշեց շահագործվող լուկոմոտիվների պարկի կրճատու-



մը, բեռնատար վագոնի շրջանառության արագացումը:

Սերգեյ Վալկոն տեղեկացրեց նաև, որ 2016 թվականի հունվարին գծի բալային գնահատականը բարելավվել է 9

միավորով՝ հասնելով 88-ի: Դրական միտումների շարքում ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրենը նշեց նաև ուղևորների աճը:

- Եղանակային վատ պայմանների պարագայում ուղևորները հունվարին գերադասում էին օգտվել երկաթուղային տրանսպորտի ծառայություններից, - շեշտեց նա:



Հունվարին ՀԿԵ-ի ուղևորների թիվը 25 հազար էր, ինչը

4% գերազանցում է 2015-ի ցուցանիշը: Իսկ ապագա աշխատանքի առաջնահերթությունների շարքում Սերգեյ Վալկոն նշեց բեռնափոխադրումների աճի ապահովումը, ծախսերի կրճատումը, բյուջեի եկամտային և ծախսային հոդվածների հավասարակշռումը, աշխատանքային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը:

Քննարկվեցին գնացքների երթևեկության անվտանգության մակարդակի կատարելագործման հարցերը

Փետրվարի 18-ին «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում կայացավ գնացքների անվտագ երթևեկությանը նվիրված գիտատեխնիկական խորհուրդ: Միջոցառման շրջանակներում քննարկվեցին երկաթուղում անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված մի շարք կազմակերպչական և տեխնիկական հարցեր:

Բացելով նիստը ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն փաստեց, որ 2008 թվականից, երբ ընկերությունը նոր էր սկսում իր աշխատանքը Հայաստանում խոշոր ներդրումներ ուղղվեցին ենթակառուցվածքի արդիականացմանն ու շարժակազմի թարմացմանը, ինչը թույլ տվեց դրական արդյունքներ արձանագրել:

- Այսօր մենք անցնում ենք գնացքների անվտանգության ապահովման այլ՝ բոլորովին նոր փուլ, - նշեց Ս. Վալկոն, ընդգծելով, որ երկաթուղայիններին մեծ աշխատանք է սպասում:

Ընկերության ղեկավարի խոսքով, այսօր ամենակարևոր խնդիրներից է աշխատանքի որակի բարձրացումը տեղերում, ինչը թույլ կտա երաշխավորել անվտանգության համակարգի արդիականացումը: Մինչդեռ ժամանակ Սերգեյ Վալկոն նշեց, որ երկաթուղում արձանագրվող խախտումների 2/3-ը կամ 76,5%-ը կազմակերպչական և տեխնոլոգիական բնույթ են կրում և միայն 1/3-ը տեխնիկական խախտումներ են:



- Խնդրահարույց հարցերի մեծամասնությունը գրանցված է աշխատանքների կազմակերպման ժամանակ համագործակցության, անձնակազմի ուսուցման, հսկողության ոլորտներում: Անհրաժեշտ է շտկել իրավիճակը, - հայտարարեց Ս. Վալկոն:

Գնացքների անվտանգ երթևեկության ապահովման գործընթացի հիմնահարցերը ներկայացրեց ՀԿԵ գլխավոր վերահսկիչ Լևոն Հակոբյանը: Արձանագ-

րելով երկաթուղու աշխատանքում խախտումների և բացթողումների էական կրճատումը նա նշեց, որ ոլորտում անհրաժեշտ է մեծ աշխատանքներ իրականացնել:

Լ. Հակոբյանը հատուկ ուշադրություն հրավիրեց ղեկավարների աշխատանքի կատարելագործման, արտադրության և անվտանգության մշակույթի մակարդակի, վերահսկիչների դերի, գծի և ենթակառուցվածքի զննումների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությանը:

Նիստի ժամանակ ելույթ ունեցան ՀԿԵ ենթակառուցվածքի, Շարժակազմի տնօրինությունների, Էլեկտրիֆիկացման և էներգամատակարարման, Ավտոմատիկայի և կապի ձեռնարկությունների պետերը, Վանաձորի, Գյումրու, Երևանի և Սևանի ուղեմասերի ղեկավարները:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ Հարավկովկասյան երկաթուղու գլխավոր տնօրենը բոլոր մասնակիցներին հանձնարարեց վերանայել աշխատանքային ծրագրերը՝ վերակառուցելով դրանք գնացքների անվտանգ երթևեկությունը երաշխավորելու նպատակով:



ՀԿԵ-ում շարունակվում է բարելավվել աշխատանքի դաշտողանության համակարգը

«Հարավկովկասյան երկաթուղում» հաստատվել է «2016 թվականին աշխատանքի պաշտպանության և հրդեհի անվտանգության պայմանների բարելավման ծրագիրը»: Աշխատանքի պաշտպանության ամենամյա ծրագրերը միջոցառումների փաթեթ են՝ ուղղված տվյալ ոլորտներում աշխատանքի պաշտպանության, արտադրական և հակահրդեհային անվտանգության պայմանների կատարելագործմանը, պրոֆիլակտիկ և հնարավոր խախտումների բացառմանը:

Ծրագրի համաձայն 2016 թվականին նախատեսվում է աշխատանքի պաշտպանության ոլորտում իրագործել կազմակերպչական-տեխնիկական մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- աշխատակիցների վրա շարժակազմի վրաերթի կանխարգելում: Դրա համար կգնվի ավելի քան 2 տոննա ներկ և կթարմացվի երկաթգծի գոտում տեղակայված մեքենաների և արքավորումների, շինությունների և կառույցների նախազգուշացնող-ազդանշանային գույներ:

- արտադրական և էլեկտրական վնասվածքների կանխարգելում: Դրա համար ձեռք կբերվեն տարբեր պաշտպանիչ միջոցներ և հարմարանքներ, աշխատակիցների պաշտպանական էլեկտրամեկուսիչներ:

- աշխատանքային պայմանների բարելավման և արտադրությունում աշխատակիցների հիվանդության կանխարգելում, ինչպես նաև սանիտարակենցաղային պայմանների բարելավում: Դրա համար ձեռնարկությունները կստանան տաքացուցիչներ, օդորակիչներ, անհրաժեշտ օժանդակ տաքացնող իրեր:

Ծրագրվում է երկաթգծի կառուցվածքային միավորներում սանիտարակենցաղային տարածքների վերանորոգման աշխատանքներ, լուսավորող սարքերի փոխարինում և այլն:

Ծրագրի համաձայն անհրաժեշտ ուշադրություն կհատկացվի նաև հակահրդեհային բաղադրիչի հզորացմանը: Երկաթգծի օբյեկտների հրդեհապաշտպանության ամրապնդման շրջանակներում նախատեսվում է.

- տարբեր տեսակի մոտ 150 կրակմարիչի ձեռքբերում.

- կշարունակվեն կայարանների (8 օբյեկտ) հակահրդեհային-ազդանշանային համակարգով զինման աշխատանքները.

- երկաթգծի 3 հրդեհավտանգ օբյեկտներում հակահրդեհային ջրմուղների մոնտաժում.

- Երևանի հատուկ արտադրամասերում 900 կրակմարիչի վերանորոգում և կրկին լցավորում.

Ծրագրի շրջանակներում երկաթգծի նյութական ապահովման հետ մեկտեղ կկատարվեն նաև աշխատանքի պաշտպանության ուսուցման և պրոպագանդման միջոցառումներ: Այսպես, 2016 թվականին ծրագրված է երկաթգծի 6 ենթաբաժինների 53 աշխատակցի գործուղել պետական լիազորված ձեռնարկություններ՝ հետագա ուսուցման, ինչպես նաև նախապատրաստվելու և պաշտոնական իրավունք ստանալու ամբարձիչների, կոմպրեսորների, զոդման ապարատների և այլ սարքերի հետ աշխատելու համար: Նաև երկաթգծի կառուցվածքի ենթաբաժիններում կվերասարքավորվեն աշխատանքի պաշտպանության գրասենյակները:

Նման մասշտաբային ծրագրի իրագործման համար ՀԿԵ ՓԲԸ-ն 2016 թվականին նախատեսել է ծախսել մոտ 26 մլն դրամ:



ՀՀ նախագահը հետ ԹԲԸ Իրավաբանական ծառայության ղեկավարին դարգևատրեց Մարտական ծառայության մեդալով

Հունվարի 27-ին, Բանակի օրվա առթիվ, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը ծառայողական պարտականությունները կատարելիս ցուցաբերած նվիրումի և խիզախության, մատուցած նշանակալի ծառայությունների համար պարգևատրեց մի խումբ զինծառայողների: Պարգևատրվածների շարքում էր «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Իրավաբանական ծառայության պետ Ալեքսանդր Աղասարյանը, ում շնորհիվ Մարտական ծառայության մեդալ:

ՀՀ նախագահ, զինված ուժերի գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Բանակի օրվա առթիվ, նաև շնորհավորել պարգևատրվածներին՝ հայրենիքի բարձր պարգևներին ու կոչումներին արժանանալու կապակցությամբ:

«Այս տարի մենք նշելու ենք Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձը: Արդեն քառորդ դար է, ինչ մենք ազատ ու անկախ պետականություն ունենք: Այս ողջ ժամանակահատվածում ոչ մի բան չենք կասկածել, որ մեր երկրի 25-ամյա ուղին անհնարին էր լինելու առանց այն բանակի, որ մենք ենք ստեղծել:

Հայաստանի զինված ուժերը դարձան այն առաջին քարերը, որ դրվեցին մեր պետականաշինության հիմքում: Դա ժամանակի և տարածաշրջանի պարտադրանքն էր: Մենք շատ լավ գիտեինք, թե ով ենք մենք և որտեղ ենք ապրում: Մենք հայ ենք և, լինելով Մերձավոր Արևելքի և Առաջավոր Ասիայի հնագույն ազգերից մեկը, ունենք հազարամյակների փորձառություն», - ասաց նախագահը:

Սերժ Սարգսյանի խոսքերով, Մերձավոր Արևելքում և Հայաստանին շատ մոտ տարածքներում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները ցավալիորեն ծանոթ են հայերին և կրկնվել են պարբերաբար: Հայերը եղել են նման իրադարձությունների ականատեսը, ժամանակակիցն ու տարեգիրը:

«25 տարի առաջ, երբ մենք ստանձնում էինք սեփական ձևակառուցող տնօրինելու պատասխանատվությունը, գիտակցում էինք, որ դա գրեթե հավասարազոր է մարտադաշտ մտնելուն: Եվ մենք

մտանք: Մտանք հանուն մարդու և ժողովրդի իրավունքների, հանուն ազատության: Մենք արդեն տեսել էինք Բաքվի հայկական եկեղեցուց բարձրացող ծուխը, որ վերջին և ամենահամոզիչ ազդանշանն էր բոլոր կասկածողների համար: Ավելի ուշ՝ արդեն մեր օրերում հրկիզված ու պայթեցված կրոնական օջախներից բարձրացող ծուխը պիտի տեսներ ողջ աշխարհը և զարմանքի ու վրդովմունքի սարսուռ ապրեր:

Մենք այդ սարսուռն ապրել ենք 1988-ից սկսած, և ինքնաբերական կերպով ձևավորված ինքնապաշտպանական ջոկատները առաջին քայլերն էին գոյապայքարի ծանապարհին: Մենք նաև գիտեինք, որ ֆիդայական շարժումը դատապարտված է ձախողման, եթե ժամանակին՝ հենց մարտի դաշտում չվերածի կանոնավոր բանակի: Հայոց կանոնավոր բանակը՝ մեր հաղթական բանակը, բռնեց պատերազմի քննությունը, որովհետև այդ օրերին և՛ Արցախը, և՛ Հայաստանը, և՛ ողջ հայությունը դարձան մեկ միասնական ազգբանակ, դարձան այն, ինչ մեր պատմիչն անվանում է «Ասքանազյան ազգ», իսկ Սուրբ գիրքը՝ «Ասքանազյան գունդ», որ



իրենից ներկայացնում է և՛ երկիր, և՛ ժողովուրդ, և՛ զինված ուժ», - ասաց ՀՀ ղեկավարը: Սերժ Սարգսյանը շեշտեց, որ չնայած այս փառապանծ տոնը համապետական է և համաժողովրդական, բայց առաջին հերթին դա զինծառայողների տոնն է: Հայ ժողովուրդը, նախագահի խոսքերով, վստահում է զինվորների նվիրվածությանը, մասնագիտական կարողություններին, բարձր մարտական ոգուն: «Մաղթում ենք, որ այսուհետ սահմանի վրա չգոհվի ոչ

մի զինվոր: Ձեզ և մեր ողջ ժողովրդին մաղթում եմ խաղաղություն՝ հանուն մեր երկրի ազատության, հանուն արդար աշխատանքի, որ պայմանն է ամեն մի առաջընթացի: Ձեր և ձեր ծառայակիցների շնորհիվ է, որ Հայաստանի զինված ուժերը իրականացնում են իրենց առաքելությունը, լուծում իրենց առջև դրված խնդիրները: Դուք դա իրականացնում եք պատվով ու մասնագիտական բարձր մակարդակով: Դուք արժանավոր հետ-


նորդներն եք նրանց, ովքեր Արցախյան հերոսամարտի կրակների մեջ հիմքերն էին դնում մեր ապագա բանակի: Նրանցից շատերն ընկան՝ մեզ պարգևելով կյանք ու ազատություն: Այսօր՝ այս նվիրական օրը, մենք գովա ենք խոնարհում նրանց պայծառ հիշատակի առջև: Դուք այն արժանավորներն եք, ովքեր հավատարիմ են նահատակների պատգամներին և նրանց կտակած արժեքներին», - ասաց նախագահը:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանը հունվարի 20-ին աշխատանքային այցով մեկնեց Իրանի Իսլամական Հանրապետություն: Հայկական պատվիրակության կազմում էին նաև «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն և գլխավոր տնօրենի տեղակալ Արմեն Դարբինյանը:

Այցի ընթացքում Գագիկ Բեգլարյանը հանդիպեց նաև ԻԻՀ տրանսպորտի և քաղաքաշինության նախարար Աբբաս Ախունդիին: Կողմերը քննարկեցին Պարսից ծոց-Ան ծով միջանցքի ստեղծման վերաբերյալ հարցեր: Մասնավորապես, բանակցություններ են ընթացել Ջուլֆա-Երասխ երկաթգծի կառուցման շուրջ:

Գագիկ Բեգլարյանը հանդիպումից հետո նշել է, որ հայ և իրանցի փորձագետների համագործակցության շնորհիվ այդ հարցում հնարավոր է դրական արդյունքներ գրանցել: «ՀՀ-ում կառուցում ենք միջազգային ստանդարտներին համապատասխան Իրանից Վրաստան տանող ավտոմոբիլային մայրուղի: Վստահ ենք, որ մինչև 2018թ. շահագործման կիսնամակ ենք երևան-Վրաստան հատվածը: Հայաստանի տարածքով երկու երկրների միջև ծանապարհային ապրանքափոխանակումների համար կստորագրվի համաձայնագիր, ինչը կնպաստի իրանական արտադրանքը Ան ծով հասցնելուն»:

Քննարկվեց Զուլֆա (Իրան) - Երասխ (Հայաստան) երկաթուղու կառուցման հարցը



ԻԻՀ տրանսպորտի և քաղաքաշինության նախարարը նկատեց, որ նախորդ տարում Իրանի ու Հայաստանի միջև բեռնափոխադրումների 50 տոկոս աճ է արձանագրվել: «Ջուլֆա-Երասխ երկաթգծի կառուցման կապակցությամբ Հայաստանի հետ բանակցություններ տարվեցին և պետք է դրա ֆինանսավորման շուրջ համաձայնություն ձեռք բերել», - ասել է Աբբաս Ախունդին: ՀՀ տրանսպորտի նախարարը



հանդիպեց նաև ԻԻՀ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Մահմուդ Վաեզի հետ: Ստորագրվեցին Փոստային կապի և հաղորդակցական ոլորտում համագործակցության և փոխըմբռնման երկու հուշագիր: Գագիկ Բեգլարյանը հանդիպեց ԻԻՀ նախագահի առաջին տեղակալ

Էսհաղ Ջահանգիրին: Կողմերը քննարկեցին ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքը, ինչպես նաև երկկողմ համագործակցության ընդլայնումը Իրանի դեմ կիրառված պատժամիջոցների չեղարկման պայմաններում:

Արդյոք հաստո՞ւկ է կնոջը

Կյանքում որքան հաճախ ենք բախվում կարծրատիպերի, և որքան հաճախ ենք ինքներս ստեղծում դրանք: Նման կարծրատիպերից մեկը մասնագիտությունների բաժանումն է կնոջ և տղամարդու: Վաղուց ենք հաշտվել այն կարծիքի հետ, որ մանկավարժի կամ դաստիարակի մասնագիտությունն ավելի շուտ կնոջ, քան տղամարդու մասնագիտություն է, իսկ բուժքույրը մեզ ավելի վստահություն է ներշնչում, քան ֆելդշերը: Բայց ահա հրշեջը կամ ոստիկանը պետք է անպայման տղամարդ լինի, չնայած շատ կանայք արդեն ապացուցել են, որ դա այնքան էլ այդպես չէ:

Աշխարհը փոխվում է, հասարակությունը՝ զարգանում, կոտրվում կամ փոխվում են նաև կարծրատիպերը: Դժվար է պատկերացնել, բայց ընդամենը 150 տարի առաջ դժվար էր կին բժիշկ գտնել. այդ մասնագիտությունը համարվում էր զուտ տղամարդկային, իսկ գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին թույլ չէին տալիս անգամ շփվել այդ մասնագիտության հետ և երկար ժամանակ չէին ընդունում: Սակայն այսօր էլ կան ոլորտներ, որտեղ դժվար է գտնել հաջող կարիերա անող կանանց: Այդ ոլորտներից մեկն էլ երկաթուղին է, որտեղ հիմնականում աշխատում են տղամարդիկ: Դա զարմանալի չէ. երկաթուղայինի մասնագիտությունը բավականին բարդ է: Եվ քչերը գիտեն, որ Լուռու մարզի Ձորագետ փոքրիկ գյուղում ապրում և աշխատում է առայժմ հանրապետությունում երկաթուղային առաջին և միակ կին կայարանապետը: Այդ փխրուն և հմայիչ կինն Անուշ Հակոբյանն է և նա դեկավարում է երկաթուղային այն կայարանը, որը կրում է հայ մեծ գրող և

բանաստեղծ Յովհաննես Թումանյանի անունը: «Թումանյան» կայարանը սպասարկում է մարդատար և բեռնատար գնացքները, այնպես որ կայարանապետի հոգսերը բավականին շատ են. անհրաժեշտ է ոչ միայն արդյունավետ կազմակերպել ընթացիկ աշխատանքները, այլև մշտապես վերահսկել երկաթուղու ընդհանուր վիճակը, ենթակառուցվածքը, վերանորոգման աշխատանքների ընթացքը, ժամանակ հատկացնել աշխատակիցներին, որոնց մեծամասնությունը տղամարդիկ են: «Ես երկաթուղի եմ եկել 27 տարի առաջ, - պատմում է Անուշ Հակոբյանը: - Սկսել եմ որպես ապրանքային գանձապահ, այնուհետև՝ որպես ապ-

րանց հանձնող-ընդունող: Երկաթուղում նաև այդպիսի մասնագիտություն կա (ժպտում է): Հետո դարձա կայարանի հերթապահ, և ահա արդեն 3 տարի է կայարանապետ եմ»: Տիկին Անուշը, ինչպես հարգալից դիմում են ենթակաները, ծանոթացնում է կայարանի շենքին, օժանդակ շինություններին, ինչպես նաև հատուկ հպարտությամբ ցուցադրում է հանպատաստից ստեղծած Յովհաննես Թումանյանի թանգարանը, որն արդեն 3 տարի գործում է կայարանի սենյակներից մեկում: Հետաքրքրվում եմ՝ արդյոք դժվար չէ՞ «գլուխ հանել» տղամարդ-ենթականերից: «Միակ դժվարությունն այն է, որ մենք մեծացել ենք միասին, տույն գյուղում, մանկությունից գիտենք իրար: Այնպես որ ստիպված էինք հենց սկզբից սահմանազատել՝ աշխատանքը՝ աշխատանք, իսկ մտերմիկ և ընկերական հարաբերությունները՝ միայն աշխատանքից դուրս: Իմ բոլոր գործընկերները գիտեն, որ եթե ես ինչ-որ բան եմ պահանջում, ապա դա ծառայողական պարտականությունների լրիվ ու անվերապահ կատարումն է», - պատմում է նա:

Անուշ Հակոբյանն ընտանիքում առաջինն է, որ ընտրել է երկաթուղայինի մասնագիտությունը: Նրա հայրը, մայրն ու եղբայրն աշխատել են Ձորագետ գյուղի նաֆթաբազայում. հայրը փականագործ էր, մայրը՝

գանձապահ-հաշվետար, եղբայրը՝ վարորդ: Սակայն երկաթուղին Անուշի երազանքն էր դեռ մանկուց, և երբ մանկապարտեզում հարցնում էին՝ մեծանաս ինչ ես դառնալու, փոքրիկը պատասխանում էր՝ ուղեկցորդուհի: Աղջնակին դուր էր եկել կայարանում կանգ առնող գնացքների ուղեկցորդուհիների համագեցտը, առանց մտքով անգամ անցկացնելու, որ երկու տասնյակ տարի անց ինքն էր լինելու այդ կայարանի կայարանապետը: «Սիրում էի հետևել նրանց և իրենց աշխատանքին, թե ինչպես էին ուղևորվելուց առաջ ստուգում գնացքը, ինչպես էին մեքենավարին ազդանշան տալիս՝ թե կարելի է շարունակել ճանապարհը, - պատմում է Անուշը: - Սակայն դպրոցն ավարտելուց հետո ցանկացա դառնալ իրավաբան: Ինստիտուտ միանգամից ընդունվել չհաջողվեց, և ես որոշեցի ժամանակն իզուր չկորցնելու համար աշխատել: Սկզբում աշխատեցի կարի ֆաբրիկայում, հետո եկա երկաթուղի: Ինձ միանգամից դուր եկավ այն, որ այստեղ բոլորը՝ ղեկավարությունից մինչև սովորական աշխատող, ենթարկվում են ընդհանուր կանոններին և օրենքներին: Անկեղծ ասած՝ բոլորովին չէի սիրում կարը, մտածում էի՝ ինչ կլինի, եթե ինձ դուր չգա նաև իրավաբանությունը: Այդպես էլ մնացի այստեղ. այսր երկաթուղին շատ եմ սիրում...»:



Սակայն դեպի երազանք տանող ճանապարհը հարթ չէր՝ ապագա կայարանապետի ընտանիքը դեմ էր դրան: Անուշի հայրը համոզում էր արջկան, որ կնոջ համար երկաթուղայինի աշխատանքը դժվար է, պահանջում է մշտական կարգապահություն, միաժամանակ ձգում և այլևս բաց չի թողնում: Իսկ մայրն ու եղբայրն իրենց հերթին դեմ էին գիշերային հերթապահություններին: «Նրանք մտահոգվում էին, վախենում, որ գիշերը որևէ մեկը կհարձակվի ինձ վրա: Բայց ես ասացի՝ վախկոտներից չեմ, թող ավազակը վախենա», - ժպիտով պատմում է նա: Հետո Անուշ Հակոբյանն ավարտում է Պոլիտեխնիկ ինստիտուտն ու դառնում իր գործի մասնագետը, որին նվիրում է ողջ իր ազատ ժամանակը: Նրա տունը գտնվում է կայարանի դիմաց, այնպես որ նաև ոչ աշխատանքային ժամերին է պատշգամբից հսկում հայրենի «Թումանյանին»:

«Մեր աշխատանքում կա հանկարծակի ստուգում հասկացությունը: Ինձ մոտ դա շուրջօրյա է, - կատակում է տիկին Անուշը: - Ես տանից էլ եմ հետևում՝ ինչպես են ժամանում գնացքները, ինչպես է աշխատում կայարանը: Երկաթուղին դարձել է կյանքիս մասնիկը, արդեն չեմ պատկերացնում կյանքս առանց դրա: Առանց անվերջ թխկթխկոցի տխրում եմ»: Սակայն բարդ է այդ կյանքը. գարնան գալուն պես կայարանապետի ողջ օրն անցնում է «մարտահաշտում»՝ կատարելով երկաթուղու գծերի մշտական ստուգումներ: «Հաճախ են գործընկերներս և մյուս կայարանների պետերն ինձ հարցնում՝ ինչո՞ւ եմ այդքան աշխատում, բայց իմ աշխատանքն ինձ միայն ուրախություն է պարգևում: Ես ուրախ եմ լինում, երբ իմ կայարանում աշխատանքը եռում է, երբ կայարանային տնտեսությունում կարգուկանոն է տիրում: Գրասենյակային աշխատանքն ինձ համար չէ, ես սիրում եմ մշտական շարժման մեջ գտնվել», - ասում է Անուշ Հակոբյանը: Իսկ հետո... ինչ ապագա է սպասվում երկաթուղային կայարան ղեկավարող միակ կնոջը: Այս հարցին տիկին Անուշը խորհրդավոր ժպիտով հիշեցնում է թևավոր դարձած խոսքը՝ թե «Վատ է այն գինվորը, ով չի ուզում դառնալ գեներալ»:





ЖЕЛЕЗНОДОРОЖНИК

АРМЕНИИ

Газета
ЗАО ЮКЖД

2 (49)

ՆԱՅԱՍԱՆԻ ԵՐՇԱԹՈՒՂԱՅԻՆ

ФЕВРАЛЬ-МАРТ, 2016



С Международным женским днем, дорогие женщины!

Дорогие женщины! Примите сердечные поздравления с замечательным весенним праздником - Международным женским днем! Не случайно он отмечается в самом начале весны, когда природа делает первый вздох после затянувшейся зимы, когда люди ждут тепла, обновления, нежности.



Сегодня трудно назвать хотя бы одну сферу деятельности, где не работали бы женщины. И железная дорога также не исключение: более 20% персонала ЮКЖД составляют представительницы прекрасного пола. В их чутких руках сосредоточены важнейшие для нормального функционирования дороги службы, отделы, структурные подразделения.

Вопреки мнению, что женщины на железной дороге могут работать только кассирами, бухгалтерами и проводницами, они представлены практически во всех сферах деятельности ЮКЖД.

В этот праздничный день желаю всем сотрудницам ЮКЖД крепкого здоровья, счастья, любви и семейного благополучия, исполнения всех желаний!

С уважением,
генеральный директор ЗАО «ЮКЖД» С. Г. Валько

Сотрудниц ЮКЖД поздравили с 8 марта

По сложившейся на Южно-Кавказской железной дороге доброй традиции, пришедших на работу в последний предпраздничный рабочий день сотрудниц ждал приятный сюрприз. Всех железнодорожниц встречали с букетами первых весенних цветов и искренними поздравлениями с наступающим Международным женским днем.



В ЗАО «Южно-Кавказская железная дорога» работает 551 женщина, 18% персонала компании составляют представительницы прекрасного пола. 51 женщина занимает руководящие должности, 287 женщин – специалисты, 139 – служащие и 74 – рабочие. Только в прошлом году за добросовестную работу поощрения заслужили 124 сотрудницы.



А четверо сотрудниц ЮКЖД отмечены высшим званием железнодорожной сферы – они являются Почетными железнодорожниками. Это – главный бухгалтер ЗАО «ЮКЖД», начальник службы бухгалтерского и налогового учета Венера Аветисян, начальник Отдела имущества Анна Мохова, начальник Отдела организации труда, заработной платы и организационно-штатной работы Рима Мхитарян, единственная на железной дороге женщина-машинист крана-путеукладчика Зинаида Ованнисян.



Генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько на состоявшемся 3 марта селекторном совещании подвел итоги работы компании за февраль 2016 года.

Как отметил С. Валько, в феврале наблюдалась положительная динамика грузоперевозок, что позволило выполнить все объемные показатели работы железной дороги, такие, как, в частности, грузооборот, перевозка грузов.

Генеральный директор ЮКЖД подчеркнул, что в феврале дополнительно было погружено 72,6 тыс. тонн, экспортные перевозки превысили запланированный показатель на 20,3%. По сравнению с аналогичным пери-

На ЮКЖД подвели итоги работы за февраль

одом прошлого года, экспортные перевозки увеличились на 5 тыс. тонн, перевозки в местном сообщении превысили план на 68 тыс. тонн.

Ежесуточная погрузка составила 97 вагонов против 60-ти планируемых, статнагрузка увеличилась на 6,5%, простой вагонов под одной грузовой операцией был сокращен с 51,5 часов до 21,5 часов, простой транзитного вагона сократился на 0,2 часа.

Согласно приведенным руководителем компании данным, среднесуточный пробег локомотива увеличился по сравнению с прошлогодним показателем на

5,1%, а его производительность на 4%. На 2,6% увеличилась и участковая скорость, которая, по данным на конец февраля, составляет 34,9 км/час.

График следования поездов на ЮКЖД в феврале был выполнен на 98,9%: из проследовавшего по железной дороге 1051 поезда задержаны были лишь 23.

Особо руководитель компании остановился на вопросах безопасности на железной дороге, отметив, что в феврале 2016 года балловая оценка пути по сравнению с прошлогодним показателем была улучшена на 7 пунктов и составила 86 единиц.

Среди основных задач, стоящих перед железной дорогой, генеральный директор ЗАО «ЮКЖД» назвал продолжение и совершенствование работы по привлечению на железную дорогу новых объемов перевозок грузов, сбалансирование доходных и расходных статей бюджета, обеспечение безопасности и стабильности работы технических средств. Сергей Валько подчеркнул, что в настоящее время железная дорога выходит из зимы и необходимо особое внимание уделять состоянию пути и инфраструктуре.

На ЮКЖД обсудили вопросы проведения путевых работ

Технический совет по вопросу подведения итогов 2015 года, подготовки и проведения летних путевых работ в 2016 году прошел 26 февраля на Южно-Кавказской железной дороге.

Открывая заседание, генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько отметил, что за годы работы ЮКЖД в Армении (2008-2015 гг.) в сферу железнодорожного транспорта было инвестировано 104,6 млрд. драмов, 74,2% из которых были направлены на модернизацию инфраструктуры. Только в прошлом году ЮКЖД инвестировала в развитие железнодорожного транспорта Армении 6,5 млрд. драмов.

Состояние инфраструктуры

имеет ключевое значение для безопасности движения поездов.

Как отметил руководитель компании, только в прошлом году было уложено 76 тыс. шпал – деревянных и железобетонных, выполнены работы с использованием новых рельсов, а балловая оценка пути была улучшена на 7 единиц до 94 баллов.

«Мы проводим работы не только по оздоровлению хозяйства пути, но и энергетике и электроснабжению, централизации и связи. В прошлом году была восстановлена и введена в эксплуатацию подстанция «Памбак», которая не работала с 1989 года», - сказал Сергей Валько.

В свою очередь начальник Дирекции инфраструктуры ЮКЖД Геннадий Смирнов проинформировал, что в 2009-2015 гг. было оздоровлено 438 км пути, что со-



ставляет порядка 60% находящегося в концессионном управлении пути. В 2015 году 103 км пути были подвергнуты планово-предупредительному ремонту, усиленный средний ремонт произведен на 16 км, а 18,4 км пути отремонтированы капитально. С начала концессионной деятельности в 2008 году было уложено 776 тыс. шпал, произведены работы по усилению пути и сооружений.

По словам Г. Смирнова, в 2016 году путем усиления контроля за соблюдением технологии пересмотрены требования к качеству производимых работ; в течение года силами дистанций пути планируется заменить 35 тыс. шпал, отремонтировать участки пути Ахпат-Алаверди-Санаин.

Представивший отчет о работе в 2015 году начальник Дирекции подвижного состава Николай

Лавренчук сообщил, что в течение года деповской ремонт прошла 91 единица вагонов, путевой техники и специального и самоходного подвижного состава. В настоящее время готовятся электровозы и тепловозы, которые будут задействованы в путевых работах в 2016 году. Также проходят обучение 11 локомотивных бригад.

Во время совещания было констатировано существенное снижение числа отказов на железной дороге. В прошлом году было зарегистрировано 187 подобных случаев, при том, что на начало работы ЮКЖД в Армении число отказов составляло 2769.

Во время технического совета также были заслушаны отчеты начальников Дирекции по перевозкам, ПДМ Санаин, Предприятия электрификации и энергоснабжения, Автоматики, телемеханики и связи, ЛСО Ванадзор, Гюмри, Ереван и Севан.



Подведены итоги работы за первый месяц 2016 года



Генеральный директор ЗАО «Южно-Кавказская железная дорога» Сергей Валько на состоявшемся 5 февраля селекторном совещании подвел итоги работы компании в январе 2016 года.

Как отметил С. Валько, в настоящее время, к сожалению, продолжает прослеживаться от-

рицательная динамика объемов перевозок, которая наблюдается с прошлого года.

Согласно приведенным руководителем компании данным, в январе 2016 года плановое задание по перевозке грузов было выполнено на 91,2%.

